# 22 սեպտեմբեր

# Շարունակենք փաստուած ուղին

Սեպտեմբեր 17, 1996
Յարգելի պր. Հրանդ Մաթէոսեան
Նախագահ Հայաստանի Գրողներու Միութեան
Երեւան, Հայաստան

Սիրելի Գրող Բարեկամ

[illegible]

Յարգանօք

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ



# «Հայ ժողովուրդը նախագահական այս ընտրությունում սխալվելու իրավունք չունի»

## Հարցազրույց Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գրիգոր Ղարիբյանի հետ:

**– Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի Հանրապետությունում իրագործվող տնտեսական քաղաքականությունը:**

– Կենտրոնացված, պլանային տնտեսական միասնական համակարգից ազատ շուկայական տնտեսական մոդելին անցնելու քաղաքականություն մշակելը շատ ծանր ու դժվար գործ է: Մեր հանրապետությունում այդ խնդիրը իր ծանրը վերցրեց երիտասարդ սերունդը: Այդ աշխատանքները գլխավորեց ներկայիս վարչապետ Հրանտ Բագրատյանը եւ արդյունքում ձեւավորվեց, իմ կարծիքով, համակարգված տնտեսական քաղաքականություն, որը ներառում է ազատ շուկայական տնտեսությանն անցնելու հիմնական ուղղությունները եւ ատելքները (մասնավոր եւ խառը սեփականաշիրական հարաբերությունների ստեղծում, նոր ֆինանսա-վարկային եւ բյուջետա-հարկային համակարգերի ձեւավորում, մասնավոր ձեռներեցության պայմանների ապահովում, արտաքին տնտեսական կապերի զարգացում եւ այլն): Այդ քաղաքականությունը իրականում աշխատում է: Դա է կարեւորը եւ հիմնականը:

Դա չի նշանակում, որ այն անթերի է եւ չունի թույլ ու խոցելի տեղեր: Դրանք, դժբախտաբար, կան եւ քիչ չեն: Օրինակ, բնակչությանը ավանդներից հանասարած զրկելը սխալ էր, ինչպես սոցիալական արդարության պահանջների առումով, այնպես էլ տեսության եւ խնայողական բանկերի եւ հիմնարկների նկատմամբ վստահության տեսակետից, առանց որի դժվար է լուծել բնակչության խնայողությունները ներքին ինվեստիցիաների կարեւոր աղբյուր դարձնելու խնդիրը: Լուրջ բացթողումներ կան նաեւ սեփականաշնորհման, ինվեստիցիոն քաղաքականության, սպառողների շահերը անորակ ապրանքներից ու ծառայություններից պաշտպանելու տեսական երաշխիքներ մշակելու հարցերում եւ այլն:

**– Ինչպիսի՞ն են Ձեր գնահատականները հանրապետության տնտեսական կայունացման մասին:**

– Գնահատականները տարբեր են, հաճախ միմյանց հակասող: Պետք է լինել իրատես եւ արդարամիտ ու աշխատել նկատել ոչ միայն կյանքի ստվերոտ կողմերը, որոնք դժբախտաբար շատ են, այլ նաեւ լուսավոր կողմերը, որոնք գուցե թույլ են, բայց կան եւ գնալով ուժեղանում են:

90-ական թվականների առաջին տարիներին մենք հայտնվեցինք խիստ դժոխային վիճակում. ավերիչ երկրաշարժ, փախստականների զանգվածային ներհոսք, տնտեսական եւ քաղաքական ճգնաժամ, հնգամյա պատերազմ, արտադրության եւ կենսամակարդակի անկում, զանգվածային գործազրկություն, արտագաղթ, ցուրտ ձմեռներ եւ մութ գիշերներ եւ այլն: Բնակչության զգալի մասը հայտնվեց աղքատության վիճակում:

1994 թվականից սկսած դրությունը բարեբախտաբար սկսեց շատ դանդաղ, բայց աստիճանաբար լավանալ: Նախ դանդաղեցին արտադրության անկման տեմպերը, իսկ վերջին տարիներին նկատելի դարձան տնտեսական կյանքի կայունացման եւ անգամ աճման միտումները: Ռուսաստանի վիճակագրական տվյալներով ԱՊՀ երկրներից 1996 թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ներքին համախառն արդյունքը աճել է միայն Հայաստանում (3,2 %), Ուզբեկստանում (1,4 %) եւ Կիրգիզիայում (0,3 %): Դա կայունացման բեկը ցուցանիշ է: Ներկայումս, ամբողջությամբ վերցրած, կայունացել է ֆինանսա-վարկային համակարգը: Դրամը աշխատում է, եւ ինֆլյացիան նվազագույն մակարդակի է: Իջել եւ նորմալացել են նաեւ բանկային տոկոսադրույքները: Տնտեսական կայունացման եւ որոշ աճի շնորհիվ նկատելի դարձան նաեւ բնակչության կենսամակարդակի աստիճանական բարելավման միտումները:

Սակայն դա գործի միայն սկիզբն է: Եթե չլուծվեն սոցիալ-տնտեսական մի շարք պրոբլեմներ, երկրի տնտեսական, սոցիալ ու քաղաքական կյանքի այդ կայունացումը վտանգի տակ կդրվի: Տնտեսական աճի տեմպերը պետք է արագացվեն, որտեղ մեծ դեր ունի պետությունը, մասնավորապես ինվեստիցիոն ակտիվ քաղաքականության առավել դինամիկ ռեժիմներ ստեղծելու հարցերում: Երկրորդ կարեւոր պրոբլեմը ծառայությունների ոլորտի աշխատողների՝ մասնավորապես ուսուցիչների, բժիշկների, դասախոսների ու գիտական աշխատողների սոցիալական ուղղակի ծանր ընկած վիճակի բարձրացումն է, նրանց աղքատության վիճակից դուրս բերելն է: Միայն դրանով մենք կփրկենք մատաղ սերունդը, դպրոցը, բարձրագույն կրթությունը եւ գիտությունը:

**– Եվ վերջին հարցը. ի՞նչ կարծիք ունեք Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագրի մասին:**

– Նախընտրական ծրագրերը որպես կանոն լավ են մշակվում: Այդպիսին է նաեւ ներկա նախագահի ծրագիրը: Այն կշռադատված, լուրջ, առանց մեծ խոստումների ծրագիր է: Բայց ժողովուրդը կարող է սխալվել, եթե նախագահ ընտրի միայն ծրագրով: Կարեւորը թեկնածուն է, նրա ամբողջական նկարագիրը, արած կյանքն ու կատարած գործը: Հայ ժողովուրդը նախագահական այս ընտրությունում սխալվելու իրավունք չունի: Ընտրապայքարի բարենպաստ պայմանները, ընդդիմության ուժեղանալը եւ ներկա նախագահին անկաշկանդ քննադատելը լայն հնարավորություններ են ստեղծել ճիշտ ընտրություն կատարելու համար: Իմ կարծիքով, բոլոր հնարավոր թեկնածուներից ժողովուրդը կարող է քիչ սխալվել հատկապես Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրության մեջ, քանի որ հայտնի են նրա որպես նախագահի թե՛ ուժեղ եւ թե՛ թույլ կողմերը: Ժամանակը եւ վերջնական արդյունքները անձի, մասնավորապես պետական գործչի գնահատման ճիշտ չափանիշներն են: Ամբողջությամբ վերցրած հաղթանակով դուրս ենք եկել ինչպես պատերազմից, այնպես էլ տնտեսական ու սոցիալական ծանր ճգնաժամային իրավիճակից: Դա է նախագահի աշխատանքի, նրա գործունեության ամփոփիչ գնահատականը: Այդ տարիներին դրսեւորվեցին Լեւոն Տեր-Պետրոսյանի ավելի հեռուն տեսնելու, մարդկանց ավելի ճիշտ գնահատելու եւ արժեւորելու բնատուր ունակությունները:

Այն լայնածավալ քննադատությունը, որը վեր հանեց նրա գործունեության բնագավառներում տեղ գտած թերությունները, անպայման նրան ավելի սթափ եւ վճռական կդարձնեն առաջիկա հինգ տարիներին առավել արդյունավետ աշխատելու համար:

Մեր առաջիկա կայունացման եւ առաջընթացի արագացման շահերը պահանջում են, որ երկրի կառավարման ղեկը դարձյալ մնա ներկա նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ձեռքում: Հիվանդ, բայց արդեն ապաքինվող մեր հասարակական օրգանիզմի համար կարող է օրհասական լինել նոր հեղափոխությունը՝ իր անխուսափելի ցնցումներով եւ ավերածություններով:

**ԱԳԳ** օրաթերթի համակարգչային ծառայությանը կարող եք պատվիրել



*Գովազդների*
*Բրոշյուրների*
*Լոգոտիպերի*
*Անցաթղթերի*
*Կնիքների*
*Բլանկների*
*Հրավիրատոմսերի*
*Ֆիրմային ոճի*
*Օրացույցների*
*Այցետոմսերի*
*Բուկլետների*
*Գրքերի*
*ձևավորում*

*Հասցեն՝ Երևան, Հանրապետության 47*
*հեռ. 581841*

Աշխատանքները կկատարվեն
Apple Macintosh, LaserMaster 1200 համակարգով



ՎԱՃԱՌՎՈՒՄ
ԿԱՄ
ՓՈԽԱՆԱԿՎՈՒՄ Է

Կոմիտասի պող. 5 հարկանի քարե շենքի 4-րդ հարկի 3 սենյականոց բնակարանը (բնակելի 46 քմ) 2-ի և 1-ի հետ:
Հեռախոս՝ 25-01-59



ՎԱՃԱՌՎՈՒՄ ԿԱՄ
ՓՈԽԱՆԱԿՎՈՒՄ Է

սեփականացված
խանութ 120 քմ:

Զանգահարել՝
53-17-73, 53-10-17



ՎԱՃԱՌՎՈՒՄ ԿԱՄ
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ Է

սեփականացված խանութ Տիգրան Մեծի փ. վրա, 200 քմ, բարվոք վիճակում:

Զանգահարել
53-17-73, 53-10-17



## Երևանի տեսական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը հայտարարում է

Մագիստրոսական ծրագրով (ուսուցման անվճարունակ ընդունելություն ներքոհիշյալ մասնագիտություններով):

- Ընդհանուր տնտեսագիտություն
- Համաշխարհային տնտեսություն և միջազգային տնտեսական հարաբերություններ
- Մասնավոր և տեսական կառավարում

Մագիստրատուրա կարող են ընդունվել այն անձինք, ովքեր, որպես կանոն, «գերազանց» և «լավ» գնահատականներով ավարտել են բարձրագույն կրթության դասընթացը:

Ուսման տևողությունը 2-2,5 տարի է, գիտափորձական ծառայությունից տարկետման իրավունքով: Այդ ընթացքում ուսանողները կարող են հանձնել նաև թեկնածուական մինիմումի քննությունները:

Մրցութային ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի և հարցազրույցի հիման վրա: Դիմորդների փաստաթղթերի ընդունումը ավարտվում է սեպտեմբերի 20-ին: Ընդունվածները հրամանագրվում են սեպտեմբերի 25-ին:

Ուսման տարեկան վճարը նվազագույն աշխատավարձի 520-պատիկը:

*ԵՊՀ, Այգեձորի մասնաշենք, տնտեսագիտության ֆակուլտետ, հեռ. 22 87 37*



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը սեպտեմբերի 20-ին, ժամը 12-ին Հանրապետության հրապարակում սկսում է «Լեռնն իմ նախագահն է» հանրահավաք-երթը: Հանրահավաքում ելույթ կունենան Վանո Սիրադեղյանը, Շաղ Ազնավուրը և այլոք:

Կարգախոսներն են՝

*Լեռնն իմ նախագահն է*
*Նախագահը նախագահ*
*Լեռնը հաղթանակի*
*նախագահ, տեր երկիր*
*հաղթանակի*
*Տեր և միություն*
*Կայուն պետություն,*
*կայուն ընտանիք*
*Հայաստանն իմ տունն է*
*Կանայք տեր են իրենց*
*երկրին ու նախագահին*
*Հաղթանակած ազգին*
*հաղթանակած*
*նախագահ*
*Ազգերի մեծ ընտանիքին*
*ներկայանալի նախագահ*
*Լեռնն աշխարհի առջև*
*մեր դեմքն է*

Միացե՛ք:



## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

երեք սենյականոց բնակարան կենտրոնական փողոցում հարևանությամբ:

Հեռախոս՝ 58-13-53



ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է

ոսկյա հագուստ:

Զանգահարել՝
53-17-73, 53-10-17:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

**Մեծ հիմնարկների հաշվապահական համակարգ**
**Փոքր հիմնարկների հաշվապահական համակարգ**
**Բանկային հաշվապահական համակարգ**
**Տնտեսական վերլուծական ծրագրեր**

«Հայկական Ծրագրեր» Ընկերության մշակած հաշվապահական համակարգերը բավարարում են հաշվապահությունը վարելու միջազգային պահանջներին:

Ընկերությունը ներդնում է համակարգերը Պատվիրատուների մոտ, կատարում է երկարաժամկետ սպասարկում:

Ձեռք բերեք այս համակարգերը Ձեր հիմնարկի, Ձեր հաշվապահի և Ձեզ համար:

Հասցեն Հերացու փ. 7 — Հեռ. 56-13-38



TOBACCO

## ՖԻՐՄԱՅԻՆ ԽԱՆՈՒԹԸ

BIG BEN ZIPPO AMFORA

առաջարկում է հոլանդական, ամերիկյան և կարիբյան հանրաճանաչ ֆիրմաների արտադրության սիգարների լայն ընտրանի, ինչպես նաև «Բիգ Բեն» և «Ամֆորա» ֆիրմաների արտադրության ծխամորճներ և թութուններ:

Առաջարկվում են նաև ամերիկյան «Զիպպո» (Zippo) ֆիրմայի կրակայրիչներ և դրանց պարագաներ:

Վաճառվում են նաև ավելի քան 190 տեսակի աշխարհում լավ հայտնի ֆիրմաների սիգարետներ:

Ընդունվում են մեծածախ պատվերներ:
Խանութը աշխատում է առանց օր.
ժամը 8-21-ը առանց ընդմիջման

Հասցեն Սարյան թիվ 1. հեռ. 58-03-11



## ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

*լոռի փանդակներ՝ նախատեսված մինչև 5000-ի համար:*

*Զանգահարել 58.18.41, ժամը 14-ից հետո:*



NESTLE

Ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչը իր պահեստներից մատչելի գնով առաջարկում է

**Nuts, Lion, Kit Kat, Nescafe,**
**և "Nestle" ֆիրմայի այլ արտադրանք:**

Դիմել՝ Վահրամ Փափազյան, 26
Հեռ. 263 701



ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան փողոց:*
*Հեռախոս 58-18-41*



ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*3 սենյականոց բնակարան, ավտոտնակով, Վրացական փողոց*
ՀԵՌ. 25-11-87, 58-18-41



AX ԱՅԱՔՍ
ՍՊ ընկերություն

հրավիրում է Ձեզ սեպտեմբերի 23-ից 27-ը կատարել անմոռանալի ճանապարհորդություն

ՌԻԴԻԴ ՉՎԵՐԹՄՎ

ԵՐԵՎԱՆ-ՎԱՐՇԱՎԱ-ԵՐԵՎԱՆ

Սեունը՝ օրը 2 անգամ:

Անմոռանալի և շահավետ ուղևորություն
Օգտվեք

«ԱՅԱՔՍ» ՍՊԸ
ցանկանում է Ձեզ հաճելի ճանապարհորդություն

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43 Ա. ՀԵՌ. 53-15-73, 53-88-45


Սովետ տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* և *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Ափյուռ»

«Տեղեկատվական» հայտարարությունների օրաթերթ. Երևան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Ինդեքս 63149. Պատվեր 2187. Տպաքանակ 4000. Ստորագրված է տպագրության 18. 09. 1996. Գինը 75 դրամ.